

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ  
ԱՆՏԱՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔ**

**Համայնքի 2018 թվականի**

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

**Կազմել է՝ համայնքի ղեկավար՝ Հովիկ Զաքարյանը**

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 02.02.2018թ –ի թիվ 6-Ն որոշմամբ)**

**Անտառուտ 2018 թ.**

## Բովանդակություն

|                                                                                  |    |
|----------------------------------------------------------------------------------|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----                                                                | 3  |
| 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----                                | 4  |
| 2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ<br>(ԸՍՏՈԼՈՐՏՆԵՐԻ) ----- | 7  |
| 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ -----                            | 11 |
| 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-ԻՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----                                       | 11 |
| 5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----                            | 13 |

## Ներածություն

Անտառուտ համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի (**ՏԱՊ-ի**) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (**ՀՀԶԾ-ով**) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, **ՏԱՊ-ը** ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

**ՏԱՊ-ի** մշակման մեթոդական հիմք է հանդիսացել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) ֆինանսավորմամբ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը և Անտառուտ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը:

**ՏԱՊ-ը** բաղկացած է **5 բաժիններից, 1-ին բաժնում** ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** բերված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով/Աղյուսակ 4/:

**ՏԱՊ-ի 3-րդ բաժնում** ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

**ՏԱՊ-ի 4-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8)** ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

### Համայնքի տեսլականը՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության , բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

### Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազվաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով:
- Տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում:
- Արտաքին լուսավորության և գազաֆիկացման համակարգի անցկացում:
- Համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում, գազամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով:
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով:
- Համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքին 2017 թվականի դեկտեմբեր ամսին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

### Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

| Ցուցանիշ                                                                           | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|------------------------------------------------------------------------------------|------------------|-----------------|
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 38,7             | 39.0            |

|                                                                  |         |         |
|------------------------------------------------------------------|---------|---------|
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)            | 306     | 308     |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ) | 12002,0 | 12002,0 |

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

## Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

| Ոլորտային նպատակ                                                                                                                 | Վերջնական արդյունքի՝                                                                                      |                  |                 |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------|------------------|-----------------|
|                                                                                                                                  | Ցուցանիշ                                                                                                  | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| <b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>                                                                                                        |                                                                                                           |                  |                 |
| Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:                         | ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին՝ %            | 60               | 70              |
|                                                                                                                                  | Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում,%                         | 38,7             | 39              |
|                                                                                                                                  | ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը(հարցումների հիման վրա), % | 40               | 60              |
| <b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>                                                                                       |                                                                                                           |                  |                 |
| Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:                                                                          | Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այո/ոչ                                    | այո              | այո             |
|                                                                                                                                  | Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից(հարցումների հիման վրա), %                    | 80               | 85              |
| <b>Ոլորտ 3.Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>                       |                                                                                                           |                  |                 |
| Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների կազմի ճշգրտում,դրանց անձնակազմի համալրում և բնակչության տարահանման պլանների ճշգրտում: | Համայնքի բնակչության լայն իրազեկում,կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին                          | 40               | 50              |
| <b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>                                                                         |                                                                                                           |                  |                 |
| Ապահովել համայնքի գազաֆիկացումը և համայնքային լուսավորությունը                                                                   | Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված ծառայություններից(հարցումների                            | 80               | 90              |

|                                                                                                                                                |                                                                                                                                                                                                           |                        |                        |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------|------------------------|
|                                                                                                                                                | հիման վրա), %                                                                                                                                                                                             |                        |                        |
| <b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>                                                                                                                 |                                                                                                                                                                                                           |                        |                        |
| 2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:                           | -                                                                                                                                                                                                         | -                      | -                      |
| <b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>                                                                                                                      |                                                                                                                                                                                                           |                        |                        |
| Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել բնակիչների անվտանգ տեղաշարժը:                                        | Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %                                                                                                            | 50                     | 60                     |
|                                                                                                                                                | Համայնքային ենթակայության ճանապարհներին և փողոցներում տեղադրված ճանապարհային նշանների թվի տեսակարար կշիռը անհրաժեշտ ճանապարհային նշանների մեջ, %                                                          | 40                     | 50                     |
| <b>Ոլորտ 7. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>                                                                              |                                                                                                                                                                                                           |                        |                        |
| Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը :                                                                                                      | Համայնքը չունի մշակույթի տուն և գրադարան ,որը իրբացասական ազդեցությունն է թողնում երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:                                                                                | Առկա չէ                | առկա է                 |
| <b>Ոլորտ 8. Սոցիալական պաշտպանություն</b>                                                                                                      |                                                                                                                                                                                                           |                        |                        |
| Բարելավել սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական վիճակը:                                                                                   | Սոցիալական ծրագրերից շահառուների բավարարվածությունը (հարցումների հիման վրա)ավելի շատ լավ, քան վատ                                                                                                         | ավելի շատ վատ, քան լավ | ավելի շատ լավ, քան վատ |
| <b>Ոլորտ 9. Գյուղատնտեսություն</b>                                                                                                             |                                                                                                                                                                                                           |                        |                        |
| 2018 թվականի ընթացքում ոլորտում նախատեսվում է վերանորոգել գյուղատնտեսական հողերի ոռոգման համակարգը,անասնապահության և հողագործության զարգացում: | Տնամերձների,վարելահողերի,խոտհարքների և արոտավայրերի նըպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով բաժրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի եկամտաբերությունը,ապահովել գյուղատնտեսական մթերքների բարձր որակ | 60                     | 70                     |
| <b>Ոլորտ 10. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</b>                                                                                            |                                                                                                                                                                                                           |                        |                        |
| 2018 թվականի ընթացքում ֆինանսական սղության պատճառով ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:   | -                                                                                                                                                                                                         | -                      | -                      |
| <b>Ոլորտ 11. Շրջակա միջավայրի պահպանություն</b>                                                                                                |                                                                                                                                                                                                           |                        |                        |

|                                                                                                                                                   |                                                                                                                                                                                                 |    |    |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|----|
| Ապահովել համայնքի բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը: | Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից(հարցումների հիման վրա), %                                                                | 30 | 55 |
|                                                                                                                                                   | Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ,%                                                                           | 30 | 60 |
|                                                                                                                                                   |                                                                                                                                                                                                 |    |    |
| <b>Ոլորտ 12. Զբոսաշրջություն</b>                                                                                                                  |                                                                                                                                                                                                 |    |    |
| Խթանել համայնքում զբոսաշրջության զարգացումը, ապահովելու զբոսաշրջիկների գիշերակացը տնային պայմաններում:                                            | Համայնք այցելած զբոսաշրջիկների բավարարվածությունը համայնքի հանգստյան գոտիներից և մատուցված ծառայություններից                                                                                    | 60 | 80 |
| <b>Ոլորտ 13. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>                                                                               | -                                                                                                                                                                                               | -  | -  |
| Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:                                          | ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը՝ ՏԻՄ-երի ընդու – նած որոշումներին և կատարած աշխատանքներին | 60 | 70 |

## 2. Համայնքի 2018թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

### Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ                                                      | Ծրագրի անվանումը                                  | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) |  |
|----------------------------------------------------------|---------------------------------------------------|---------------------------|--|
| <b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>                                |                                                   |                           |  |
| 1.                                                       | Համայնքի աշխատակազմի պահպանում                    | 7148,0                    |  |
| 2.                                                       | Ընդհանուր բնույթի համայնքային այլ ծառայություններ | 15,0                      |  |
|                                                          | <b>Ընդամենը</b>                                   | <b>7163,0</b>             |  |
| <b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b> |                                                   |                           |  |
| 1.                                                       | Կապիտալ աշխատանքների իրականացում, որից            |                           |  |

|                                                |                                                             |                |  |
|------------------------------------------------|-------------------------------------------------------------|----------------|--|
|                                                | գազաֆիկացում                                                | 9002,0         |  |
|                                                | Փողոցային լուսավորության ցանցի կառուցում                    | 3000,0         |  |
|                                                | <b>Ընդամենը</b>                                             | <b>12002,0</b> |  |
| <b>Ոլորտ 8.Սոցիալական պաշտպանություն</b>       |                                                             |                |  |
| 1.                                             | Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին աջակցություն       | 100.0          |  |
| 2.                                             | Հուղարկավորության նպաստներ բյուջեից                         | 100.0          |  |
|                                                | <b>Ընդամենը</b>                                             | <b>200,0</b>   |  |
| <b>Ոլորտ 11.Շրջակա միջավայրի պահպանություն</b> |                                                             |                |  |
| 1.                                             | Համայնքում կոմունալ ծառայությունների մատուցում /աղբահանում/ | 523,1          |  |
|                                                | <b>Ընդամենը</b>                                             | <b>523,1</b>   |  |

#### Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ                                                               | Ծրագրի անվանումը                                               | Ծրագրի արժեքը<br>(հազ. դրամ) | Համայնք  |
|-------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------|------------------------------|----------|
| <b>Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>           |                                                                |                              |          |
| 1                                                                 | Համայնքի գլխավոր հատակագծի կազմում                             | 2000.0                       | Անտառուտ |
| 2                                                                 | Համայնքապետարանի և բուժկետի կառուցում                          | 20000.0                      | Անտառուտ |
| 3                                                                 | Խմելու ջրագծի նորոգում                                         | <b>1000.0</b>                | Անտառուտ |
|                                                                   | <b>Ընդամենը</b>                                                | <b>23000.0</b>               |          |
| <b>Ոլորտ 6.Տրանսպորտ</b>                                          |                                                                |                              |          |
| 1.                                                                | Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում | 3500.0                       | Անտառուտ |
|                                                                   | <b>Ընդամենը</b>                                                | <b>3500.0</b>                | Անտառուտ |
| <b>Ոլորտ 7. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b> |                                                                |                              |          |
| մշակույթի տան կառուցում                                           |                                                                | Հստակեցված չէ                | Անտառուտ |
| Գրադարանի կառուցում                                               |                                                                | Հստակեցված չէ                | Անտառուտ |

#### Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Ամփոփ նկարագիր                                                                                                                      | Արդյունքային ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                      | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------|--------------|--------|--------|
| <b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>                                                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                           |              |        |        |
| <b>Ոլորտային նպատակ</b><br>Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը: | <b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</b><br>1.ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին(հարցումների հիման վրա) - 70%<br>2.Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում – 39%<br>3,ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության |                           |              |        |        |



|                                                                                                                                                                                                                                                                                                             |                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                                                                                                                                                                                                                          |                                          |                                   |                                                                             |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------|-----------------------------------|-----------------------------------------------------------------------------|
| մակարդակը(հարցումների հիման վրա) -60 %                                                                                                                                                                                                                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                                                                                                                                                                                                                          |                                          |                                   |                                                                             |
| Ծրագիր 1. Համայնքի աշխատակազմի պահպանում                                                                                                                                                                                                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                                                                                                                                                                                                                          |                                          |                                   |                                                                             |
| Ծրագրի նպատակ<br>Ապահովել ՏԻՄ-երի, աշխատակազմի արդյունավետ գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը:                                                                                                                                                               | Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.<br>1. ՏԻՄ-երը, աշխատակազմը, բնականոն գործել են, բարելավվել են բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը (հարցումների հիման վրա) – բավականին լավ<br>2.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում - 39% |                                                                                                                                                                                                                          | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, | 2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն |
